

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ KOTAYK MARZ



**Մարզկենտրոնը՝**  
ք. Հրազդան

**Marz centre**  
Hrazdan town

**Տարածաշրջանները՝**  
Հրազդան  
Կոտայք  
Նաիրի

**Territoires**  
Hrazdan  
Kotayk  
Nairi

**Քաղաքները՝**  
Հրազդան  
Աբովյան  
Չարենցավան  
Եղվարդ  
Բյուրեղավան  
Նոր Հաճն  
Ծաղկաձոր

**Towns**  
Hrazdan  
Abovyan  
Charentsavan  
Yeghvard  
Byureghavan  
Nor-Hachn  
Tsaghkadzor

Տարածքը Territory	2 086 քառ.կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	7.0
Համայնքներ, 2019 թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2019	42
Քաղաքներ Towns	7
Գյուղեր Villages	62
Բնակչության թվաքանակը 2019թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2019	251.6 հազ.մարդ/ ths. person
<i>այդ թվում՝</i> <i>of which:</i>	
քաղաքային urban	137.4 հազ.մարդ/ ths. person
գյուղական rural	114.2 հազ.մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2018 թ., % Share of marz population in the total population of the Republic of Armenia 2018, %	8.5
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2018 թ., % Share of urban population size 2018, %	54.6
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	155 235.8 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր of which: arable land	37 582.8 հա/ ha

Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան և Ազատ գետերը: Հրազդան գետը (նախկին անվանումը՝ Զանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

Ազատ գետը նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

Մարզը հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջնի» և «Արզնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2 528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Արայի լեռը (բարձրությունը՝ 2 577 մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1 200 – 1 300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1 700 – 1 800 մ բարձրության վրա):

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

2018թ.-ին մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 10.8 %,
- գյուղատնտեսություն՝ 8.2 %,
- շինարարություն՝ 5.6 %,
- մանրածախ առևտուր՝ 4.6 %,
- ծառայություններ՝ 6.7 %:

Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող արդյունաբերությունն է: Մարզը մեծ դեր ունի

Kotayk marz is situated in the centre of the Republic of Armenia. In the South-West it borders with capital Yerevan, in the West –Aragatsotn marz, in the North –Lori marz, in the North-East –Tavush marz, in the East – Gegharkunik marz and in the South –Ararat marz.

Hrazdan and Azat rivers run on Kotayk marz of the Republic of Armenia territory. Hrazdan River (Zangu) is one of left tributaries (the length is 141 km) of Araks River. There are 340 tributaries in the river system, 25 of which have length more than 10 km. The river tributaries are Marmarik, Tsaghkadzor, Aray River and Getar.

Asat river is also one of left tributaries of Araks (the length is 55 km). It originates from the Geghama mountain range (mainly lives on underground waters). The river waters are mainly used with the irrigation purpose.

Marz is also rich with mineral waters – in particular, “Bjni” and “Arzni”.

Geghama mountain laps, Tsaghkunyats mountain range, Hatis and Aray Mountains are situated in the marz territory. Hatis Mountain (Shamiram mountain) is a con-shaped volcanic mass (the height is 2 528 m). Mountain is covered by meadow-steppe vegetation.

Aray Mountain is an extinct volcanic mass (the height is 2 577m) and situated in the east from Aragats Mountain between Kasakh and Hrazdan rivers.

The marz plains are Eghvard plain (the height above sea level is 1 200 – 1 300 m) and Hrazdan plateau (the height above sea level is 1 700 – 1 800 m).

Yerevan-Hrazdan-Sevan motor-road and Yerevan-Hrazdan-Ijevan railway that are of great importance for the country pass through the central part of the marz territory.

In 2018 the share of economy main branches of the Republic of Armenia Kotayk marz in total volume of correspondent branches of the republic comprised

- industry 10.8 %,
- agriculture 8.2 %,
- construction 5.6 %,
- retail trade 4.6 %,
- services 6.7 %.

Kotayk marz comparatively developed and has multi-branch economy.

The main branch of economy is industry. Marz has an exclusive role, particularly, in the energy field. Here are 2

եներգետիկայի ոլորտում: Այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություն:

Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ոլորտները.

ա) սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերություն և մետաղա արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, ոսկերչական արտադրատեսակների արտադրություն

Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Աբովյան քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 44.8 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

Բյուրեղավան քաղաքի (2019թ. տարեսկզբին՝ 9.2 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 24 կմ հեռավորության վրա) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

Եղվարդ քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 11.9 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը (թորած ակոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի), կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրությունը:

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի մեջ հիմնական

large organizations of electricity production.

Other main trend of marz industry is manufacturing industry, in which the following branches are more developed:

a) food and of drinks production (meat and meat products processing and canning, fruits and vegetables processing and canning, milk products, flour, beverages production),

b) non-metal mineral other production (glass and glass products production, cement production),

c) metallurgy and metal products production ( steel and iron casting),

d) furniture industry, manufacture of jewelry products.

The main branch of marz agriculture is poultry farming. There are three large battery farms in the territory of the marz.

Freight and passenger transportations in the marz are implemented by road transport, railway and electric transports (cableway).

Abovyan town (44.8 ths. inhabitants as of the beginning of the 2019) is situated in 18 km distance from Yerevan. It is one of fast growing towns and big industrial centres of the republic.

The main trend of town industry is manufacturing, in which beer production takes prevailing place.

The main trend of industry of Byureghavan town (9.2 ths. inhabitants as of the beginning of the 2019, is situated in 24 km distance from Yerevan) is manufacturing, in which the production of non metal mineral and other produce (glass packing, porcelain and glazed earthenware industries) takes predominate place.

Eghvard town (11.9 ths. Inhabitants as of the beginning of the 2019) is situated at the south foot of Aray mountain, distance from Yerevan is 18 km.

The main trend of town industry is manufacturing, in which the production of food and beverages (distilled alcoholic of drinks (cognac), milk products, flour production) and production of leather articles and shoes are particularly separated.

Agriculture plays a key role in the economic life of the town as well, in which grain farming is the main trend.

ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

Նոր Հաճն քաղաքի (2019թ. տարեկզբին՝ 9.3 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 30 կմ է) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ոսկերչական արտադրանքների արտադրությունը:

Հրազդան քաղաքի (2019թ. տարեկզբին՝ 40.5 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է Հայաստանի Հանրապետությանում: Արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

Չարենցավան քաղաքը (2019թ. տարեկզբին՝ 20.5 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 36 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական կազմակերպություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևոր արդյունաբերական կենտրոն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

Ծաղկաձոր քաղաքի (2019թ. տարեկզբին՝ 1.2 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 55 կմ հեռավորության վրա) կլիման մեղմ է և առողջարար: Առողջարանային քաղաք է:

The main trend of industry of Nor Hachn town (9.3 ths. inhabitants in the end of 2019, is situated in 30 km distance from Yerevan) is manufacturing, in which the production of furniture and manufacture of jewelry products.


The distance of Hrazdan town (40.5 ths. inhabitants as of the beginning of the 2019) from Yerevan is 50 km. It is situated on the left bank of upper flow of Hrazdan river. It is famous as an industrial centre. The Hrazdan heating and electric station is located here that is the most powerful in the republic. The other trend of town industry is manufacturing, in which the production of non metal mineral and other produce (in particular, cement production) takes prevailing place.

Charentsavan town (20.5 inhabitants as of the beginning of the 2019) is situated in 36 km distance from Yerevan on the left bank of Hrazdan River. In 1953 after the accomplishing of hydro-electric station construction several large industrial enterprises have been established and Charentsavan became one of the most important industrial centres of the republic.

The main trend of town industry is manufacturing, in which metallurgy and finished metal products production (steel and iron casting) comprise its prevailing part.

The climate of Tsaghkadzor town (1.2 ths. Inhabitants as of the beginning of the 2019), is situated in 55 km distance from Yerevan) is soft and healthy. It is sanatorium town.

**ԿՈՏԱԿՔԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻ ՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ,  
2019թ. հունվարի 1-ի դրությամբ  
AGE AND SEX PYRAMID OF KOTAYK MARZ DE JURE POPULATION  
2019 as of January 1**



**ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ  
RETAIL TRADE UNITS**

	Քանակը Number					
	2014	2015	2016	2017	2018	
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1 193	1 148	1 147	1 162	1 144	Retail trade units, total
<i>այդ թվում՝</i>						<i>of which:</i>
խանութներ	854	909	901	955	943	Shops
կրպակներ	280	153	163	128	119	Kiosks
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2	markets of agricultural produce
սպառողական ապրանքների շուկաներ	4	5	3	3	3	markets of consumer goods
առևտրի այլ օբյեկտներ	53	79	78	74	77	other trade units

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**EDUCATIONAL INSTITUTIONS**

	Քանակը Number					
	2014	2015	2016	2017	2018	
Պետական նախադպրոցական	54	53	52	53	53	State pre-school
Պետական հանրակրթական	104	104	104	103	101	State general educational
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	-	-	Non-state general educational
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	25	24	23	23	25	Musical, art schools, creative centers for children
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	8	8	8	7	6	State preliminary vocational educational <sup>1</sup>
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6	State middle vocational educational
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1	Non-state higher educational

**ՔԱՂԱՔՆԵՐ**  
**TOWNS/CITIES**

Անվանումը	Town name	Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>2</sup> Number of de jure population as of January 1, 2019, person <sup>2</sup>
Հրազդան	Hrazdan	40 461
Աբովյան	Abovyan	44 844
Չարենցավան	Charentsavan	20 501
Եղվարդ	Eghvard	11 933
Բյուրեղավան	Byureghavan	9 179
Նոր Հաճն	Nor Hachn	9 308
Ծաղկաձոր	Tsaghkadzor	1 185

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

Including those middle vocational educational institutions, which implement preliminary vocational program.

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

Population of city/towns of the Republic of Armenia are presented according to the current population statistics based on the 2011 Population Census of the Republic of Armenia.

**ԳՅՈՒՂԵՐ**  
**VILLAGES**

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>1</sup> Number of dejure population as of January 1, 2019, person <sup>1</sup>
<b>Հրազդանի տարածաշրջան</b> <b>Hrazdan district</b>			
1	Ալափարս	Alapars	1 954
2	Աղավնաձոր	Aghavnadzor	1 263
3	Արզական	Arzakan	2 684
4	Արտավազ	Artavaz	514
5	Փյունիկ	Pyunik	335
6	Բջնի	Bjni	2 760
7	Լեռնանիստ	Lernanist	2 882
8	Կարենիս	Karenis	721
9	Հանքավան	Hangavan	69
10	Մարմարիկ	Marmarik	703
11	Մեղրաձոր	Meghradzor	2 585
12	Գոռգոչ (Կորչլու)	Gorgoch (Korchlu)	16
13	Ջրառատ	Jrarat	550
14	Սոլակ	Solak	2 441
15	Քաղսի	Qaghsi	2 519
16	Ֆանտան	Fantan	838
<b>Կոտայքի տարածաշրջան</b> <b>Kotayk district</b>			
1	Ակունք	Akunk	2 155
2	Առինջ	Arinj	6 150
3	Արամուս	Aramus	3 841
4	Արզնի	Arzni	2 634
5	Բալախովիտ	Balahovit	3 568
6	Գառնի	Garni	7 814
7	Գեղադիր	Geghadir	707
8	Գեղաշեն	Geghashen	4 141
9	Գեղարդ	Geghard	339
10	Գետարգել	Getargel	792
11	Գոդթ	Goght	2 020
12	Զառ	Zar	1 348
13	Զովաշեն	Zovashen	166

<sup>1</sup> ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 955 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և Ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2019թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +11.6%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

The sources of these data on RA villages are statistical annual reporting forms «Age and Sex composition of rural population» provided by the communities. According to this source the total resident population of RA 955 villages, as a whole and by marzes (regions), have some deviation from the same data of current statistics of population, which are based on the administrative registers of the Civil Status of the Ministry of Justice and the Police, while the latter is statistically adjusted by the migration results of ILCS (as of 01.01.2019 the deviation comprised +11.6% for the Republic). The deviation is mainly due to the lack of a system for recording, sharing, comparing and nominal data level calibration of the information given between the villages.

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>1</sup> Number of dejure population as of January 1, 2019, person <sup>1</sup>
14	Զովք	Zovk	812
15	Կաթնաղբյուր	Katnaghbyur	651
16	Կամարիս	Kamaris	2 276
17	Կապուտան	Kaputan	1 316
18	Կոտայք	Kotayk	1 805
19	Հատիս	Hatis	314
20	Հացավան	Hatsavan	564
21	Զորաղբյուր	Dzoraghbyur	2 337
22	Մայակովսկի	Mayakovski	2 182
23	Նոր գյուղ	Nor gyugh	1 605
24	Նուռնուս	Nurnus	641
25	Ողջաբերդ	Voghjberd	942
26	Պտղնի	Ptghni	1 616
27	Ջրաբեր	Jraber	421
28	Ջրվեժ	Jrvej	6 022
29	Սևաբերդ	Sevaberd	257
30	Վերին Պտղնի	Verin Ptghni	773
<b>Նաիրիի տարածաշրջան</b> <b>Nairi district</b>			
1	Արագյուղ	Aragyugh	1 108
2	Արգել	Argel	3 135
3	Բուժական	Bujakan	1 617
4	Գետամեջ	Getamej	738
5	Զովունի	Zovuni	6 124
6	Զորավան	Zoravan	1 635
7	Թեղենիք	Teghenik	516
8	Մրգաշեն	Mrgashen	2 137
9	Նոր Արտամետ	Nor Artamet	1 074
10	Նոր Գեղի	Nor Geghi	6 382
11	Նոր Երզնկա	Nor Erznka	1 757
12	Պոռշյան	Proshyan	5 505
13	Սարալանջ	Saralanj	337
14	Քանաքեռավան	Qanaqeravan	3 778
15	Քասախ	Qasakh	5 692
16	Քարաշամբ	Qarashamb	703



**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2018թ.  
SOME SOCIAL INDICATORS OF DISTRICT COMMUNITY WITH 10 000  
POPULATION IN KOTAYK MARZ, 2018**

	Ընդամենը Total	նրանցից՝ including:		
		կանայք <sup>1</sup> women <sup>1</sup>	սղամարդիկ <sup>1</sup> men <sup>1</sup>	
Բնակչությունը, մարդ	10 000	5 216	4 784	Population, person
Ծնվածներ, մարդ	126	60	66	Births, person
Մահացածներ, մարդ	89	42	47	Deaths, person
Ամուսնություններ	52	X	X	Marriages
Ամուսնալուծություններ	13	X	X	Divorces
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	38.2	X	X	Total area of housing stock provided per inhabitant, square metre
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝				Education sphere, attendance to educational institutions, person
նախադպրոցական	264	125	139	pre-school
հանրակրթական	1 473	715	758	general schools
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	188	117	71	musical, art schools, creative centers for children
նախնական մասնագիտական (արհեստագործական)	26	6	20	preliminary vocational
միջին մասնագիտական	53	24	29	middle vocational
բարձրագույն մասնագիտական	7	4	3	higher vocational
Առողջապահության ոլորտ՝				Public health sphere
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	34 375	...	...	annual attendance to polyclinic during the year (number of attendances)
Մարզիկներ, մարդ	141	20	121	Athletes, person
Զբաղվածներ, մարդ	3 144	1 230	1 914	Employed, person
նրանցից՝ գիտական հիմնարկներում	0.2	0.2	-	including- in Science establishments
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-	including- doctors of Science
գիտության թեկնածուներ	0.0	0.0	-	candidates of Science
ուսուցիչներ	102	92	10	teachers
բժիշկներ	21	...	...	physicians
միջին բուժանձնակազմ	40	...	...	paramedical personnel
Գործազուրկներ, մարդ	1 077	502	575	Unemployed, person
Սոցիալական ապահովության ոլորտ				Social insurance sphere
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 467	858	609	total pensioners/ as of the end of the year/ person
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	338	X	X	families that get poverty family benefit and one-time benefit
Հաճախումների քանակը տարվա ընթացքում				Annual attendance during the year
գրադարան	16 737	...	...	library
թատրոն	-	-	-	theatre
համերգ	-	-	-	concert
թանգարան	620	...	...	museum
Իրավական ոլորտ				Law sphere
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	81	X	X	total crimes, during the year
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	43	X	X	of which - not grave crime
միջին ծանրության	27	X	X	medium crime
ծանր	12	X	X	grave crime
առանձնապես ծանր	0.0	X	X	special grave crime

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են:  
The indicators are accountable.